

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 20-21-10
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

05 նոյեմբերի 2020թ.

ք. Երևան

Նախագահությամբ՝

անդամներ՝

Ռ. Սինոյանի
Հ. Ռշտունի
Ա. Ալաբերքյան
Վ. Բերակչյան
Տ. Իսրաելյան
Բ. Ղալոյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 29/10/20թ. «Արարատ-2»-«Նորավանք» (ԱԽ051) խաղի մասին.

«Արարատ-2» թիմի ֆուտբոլիստների մարզահագուստի ետնամասում բացակայում էին ազգանունները:

2. 31/10/20թ. «Փյունիկ»-«Արարատ» (ԲԽ048) խաղի մասին (Խաղի մեկնարկից առաջ Փյունիկ թիմը անցկացրեց ֆուտբոլիստներից մեկի 100-րդ խաղի նշման կարճ արարողություն, որը համաձայնեցված չէր ոչ ՀՖՖ-ի և ոչ էլ պատվիրակի հետ)

3. 31/10/20թ. «Գանձասար-Կապան»-«Վան» (ԲԽ050) խաղին «Գանձասար-Կապան» թիմի գլխ.մարզչի օգն. Արմեն Պետրոսյանի (N 868) հեռացման մասին (մրցավարին վիրավորելու համար)

4. 02/11/20թ. «Նոա»-«Ալաշկերտ» (ԲԽ055) խաղին «Ալաշկերտ» թիմի ֆուտբոլիստ Գրիգոր Աղեկյանի (N 8390) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար)

5. 30/10/20թ. «Շիրակ»-«Նոա» (ԲԽ047) խաղի մասին.

«Շիրակ» ՖԱ-ն չկարողացավ ապահովել հանդիպման պատվիրակի անվտանգությունը:

6. 31/10/20թ. «Գանձասար-Կապան»-«Վան» (ԲԽ050) խաղի մասին.

«Գանձասար-Կապան» ՖԱ-ն չկարողացավ ապահովել հանդիպման մրցավարների անվտանգությունը: Հանդիպմանը ներկա ոստիկանության աշխատակիցները հանդիպման ավարտից հետո չկազմակերպեցին մրցավարների անվտանգ տեղափոխումը հանդերձարաններ՝ չնայած այն հանգամանքին, որ նրանք նախապես տեղեկացվել էին մրցավարների նկատմամբ հնարավոր ագրեսիայի վերաբերյալ:

7. 01/11/20թ. «Արարատ-2»-«Ալաշկերտ-2» (ԱԽ060) խաղի մասին («Արարատ-2» թիմի ֆուտբոլիստների մարզահագուստի ետնամասում բացակայում էին ազգանունները:

8. 03/11/20թ. «Գանձասար-Կապան»-«Արարատ-Արմենիա» (ԲԽ051) խաղի մասին. «Գանձասար-Կապան» թիմի որևէ ներկայացուցիչ չի ներկայացել նախախաղային

խորհրդակցությանը, խաղի մեկնարկից 75 րոպե առաջ «Գանձասար-Կապան» թիմը չի ներկայացել մարզադաշտ՝ դրա պատճառների մասին նախապես պաշտոնապես չտեղեկացնելով պատվիրակին: Խաղի մեկնարկից 60 րոպե առաջ դեռևս Գանձասար-Կապան թիմը չի ներկայացել մարզադաշտ, այդ պատճառով, հիմք ընդունելով ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի Հոդված 17-ի 17.03 կետը, խաղի պատվիրակն ու մրցավարը խորհրդակցության արդյունքում որոշեցին, որ Գանձասար-Կապան թիմը համարվում է խաղին չներկայացած, հետևաբար, նշված խաղը չի կայացել:

9. ՄԿԱ բաժնի պետ Խ.Զարգարյանի 04/11/2020թ. ծառայողական գրության քննարկում.

03/11/2020թ.-ի գրությամբ՝ «Գանձասար-Կապան» ՖԱ-ն հրաժարվում է VBET Հայաստանի Պրեմիեր լիգայի առաջնությունից և VBET Գավաթի խաղարկությունից:

10. 25/10/20թ. «Փյունիկ-աղջիկներ»-«Գանձասար-Կապան աղջիկներ» (ԿԲԽ016) խաղին «Գանձասար-Կապան աղջիկներ» թիմի ֆուտբոլիստ Պայծառիկ Ալավերդյանի (N 34655) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար)

1. 29/10/20թ. «Արարատ-2»-«Նորավանք» (ԱԽ051) խաղի մասին.

«Արարատ-2» թիմի ֆուտբոլիստների մարզահագուստի ետնամասում բացակայում էին ազգանունները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 29/10/20թ. «Արարատ-2»-«Նորավանք» (ԱԽ051) խաղին՝ «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստների ազգանունները մարզահագուստի ետնամասում բացակայելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 59-րդ կետի համաձայն՝ «Արարատ» ֆուտբոլային ակումբ ակումբին տուգանել 20000 ՀՀ դրամի չափով:

2. 31/10/20թ. «Փյունիկ»-«Արարատ» (ԲԽ048) խաղի մասին.

Խաղի մեկնարկից առաջ Փյունիկ թիմը անցկացրեց ֆուտբոլիստներից մեկի 100-րդ խաղի նշման կարճ արարողություն, որը համաձայնեցված չէր ոչ ՀՖՖ-ի և ոչ էլ պատվիրակի հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2. 31/10/20թ. «Փյունիկ»-«Արարատ» (ԲԽ048) խաղին՝ «Փյունիկ ՖԱ ՀԿ»-ի կողմից ՀՖՖ 2020-2021 մրցաշրջանի Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 13-րդ հոդվածի 06-րդ կետը խախտելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 66-րդ կետի համաձայն՝ «Փյունիկ ՖԱ ՀԿ»-ին հայտարարել նկատողություն:

3. 31/10/20թ. «Գանձասար-Կապան»-«Վան» (ԲԽ050) խաղին «Գանձասար-Կապան» թիմի գլխ.մարզչի օգն. Արմեն Պետրոսյանի (N 868) հեռացման մասին (մրցավարին վիրավորելու համար)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

3. 31/10/20թ. «Գանձասար-Կապան»-«Վան» (ԲԽ050) խաղին՝ «Գանձասար-Կապան» թիմի գլխ.մարզչի օգն. Արմեն Պետրոսյանի (N 868) հեռացման (մրցավարին վիրավորելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 39-րդ կետի համաձայն՝ գլխ.մարզչի օգն. Արմեն Պետրոսյանին որակազրկել մինչև 2021թ.-ի մայիսի 31-ը, «Գանձասար-Կապան» ՖԱ-ին տուգանել 500000 ՀՀ դրամի չափով:

4. 02/11/20թ. «Նոա»-«Ալաշկերտ» (ԲԽ055) խաղին «Ալաշկերտ» թիմի ֆուտբոլիստ Գրիգոր Աղեկյանի (N 8390) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

4. 02/11/20թ. «Նոա»-«Ալաշկերտ» (ԲԽ055) խաղին «Ալաշկերտ» թիմի ֆուտբոլիստ Գրիգոր Աղեկյանի (N 8390) հեռացման (նույն խաղում 2 զգուշացում ստանալու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 34-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Գրիգոր Աղեկյանին որակազրկել 1 խաղով, «Ալաշկերտ» ՖԱ-ին տուգանել 25000 ՀՀ դրամի չափով:

5. 30/10/20թ. «Շիրակ»-«Նոա» (ԲԽ047) խաղի մասին

«Շիրակ» ՖԱ-ն չկարողացավ ապահովել հանդիպման պատվիրակի անվտանգությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

5. 30/10/20թ. «Շիրակ»-«Նոա» (ԲԽ047) խաղին՝ «Շիրակ» ՖԱ-ն Խաղի ժամանակահատվածում անվտանգության աշխատակիցների և/կամ կարգադրիչների ոչ պատշաճ, թերի աշխատանք կատարելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 41-րդ կետի համաձայն՝ «Շիրակ» ՖԱ-ին տուգանել 200000 ՀՀ դրամի չափով:

Միաժամանակ, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեն, արդեն իսկ հարուցված վարույթի շրջանակներում գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության նպատակով՝ ամբողջական ուսումնասիրության է ենթարկելու տեղի ունեցած միջադեպը՝ դրանում մասնակցություն ունեցած բոլոր անձանց ներգրավմամբ:

6. 31/10/20թ. «Գանձասար-Կապան»-«Վան» (ԲԽ050) խաղի մասին.

«Գանձասար-Կապան» ՖԱ-ն չկարողացավ ապահովել հանդիպման մրցավարների անվտանգությունը: Հանդիպմանը ներկա ոստիկանության աշխատակիցները հանդիպման ավարտից հետո չկազմակերպեցին մրցավարների անվտանգ տեղափոխումը հանդերձարաններ՝ չնայած այն հանգամանքին, որ նրանք նախապես տեղեկացվել էին մրցավարների նկատմամբ հնարավոր ագրեսիայի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

6. 31/10/20թ. «Գանձասար-Կապան»-«Վան» (ԲԽ050) խաղին «Գանձասար-Կապան» ՖԱ-ն խաղի ժամանակահատվածում անվտանգության աշխատակիցների և/կամ կարգադրիչների ոչ պատշաճ, թերի աշխատանք կատարելու համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 41-րդ կետի համաձայն՝ «Գանձասար-Կապան» ՖԱ-ին տուգանել 200000 ՀՀ դրամի չափով:

Միաժամանակ, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեն, արդեն իսկ հարուցված վարույթի շրջանակներում գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության նպատակով ամբողջական ուսումնասիրության է ենթարկելու տեղի ունեցած միջադեպը՝ դրանում մասնակցություն ունեցած բոլոր անձանց ներգրավմամբ:

7. 01/11/20թ. «Արարատ-2»-«Ալաշկերտ-2» (ԱԽ060) խաղի մասին.

«Արարատ-2» թիմի ֆուտբոլիստների մարզահագուստի ետնամասում բացակայում էին ազգանունները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

7. 01/11/20թ. «Արարատ-2»-«Ալաշկերտ-2» (ԱԽ060) խաղին «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստների ազգանունները մարզահագուստի ետնամասում բացակայելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 59-րդ կետի համաձայն՝ «Արարատ» ՖԱ-ին տուգանել 30000 ՀՀ դրամի չափով:

8. 03/11/20թ. «Գանձասար-Կապան»-«Արարատ-Արմենիա» (ԲԽ051) խաղի մասին. «Գանձասար-Կապան» թիմի որևէ ներկայացուցիչ չի ներկայացել նախախաղային խորհրդակցությանը, խաղի մեկնարկից 75 րոպե առաջ «Գանձասար-Կապան» թիմը չի ներկայացել մարզադաշտ՝ դրա պատճառների մասին նախապես պաշտոնապես չտեղեկացնելով պատվիրակին: Խաղի մեկնարկից 60 րոպե առաջ դեռևս «Գանձասար-Կապան» թիմը չի ներկայացել մարզադաշտ, այդ պատճառով, հիմք

ընդունելով ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 17-րդ հոդվածի 17.06- կետը, խաղի պատվիրակն ու մրցավարը խորհրդակցության արդյունքում որոշեցին, որ Գանձասար-Կապան թիմը համարվում է խաղին չներկայացած, հետևաբար, նշված խաղը չի կայացել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

8. 03/11/20թ. «Գանձասար-Կապան»-«Արարատ-Արմենիա» (ԲԽ051) խաղին՝ «Գանձասար-Կապան» թիմը անհարգելի պատճառով խաղին չներկայանալու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ «Գանձասար-Կապան» թիմին գրանցել տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով, «Արարատ-Արմենիա» թիմին շնորհել տեխնիկական հաղթանակ 3:0 հաշվով, «Գանձասար-Կապան» ՖԱ-ին տուգանել 200000 ՀՀ դրամի չափով:

9. ՄԿԱ բաժնի պետ Խ.Զարգարյանի 04/11/2020թ. ծառայողական գրության քննարկում.

03/11/2020թ.-ի գրությամբ «Գանձասար-Կապան» ՖԱ-ն հրաժարվում է VBET Հայաստանի Պրեմիեր լիգայի առաջնությունից և VBET Գավաթի խաղարկությունից:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

9.1. «Գանձասար-Կապան» ՖԱ-ն՝ սեփական դիմումի համաձայն, VBET Հայաստանի Պրեմիեր լիգայի առաջնության ընթացքում հետագա մասնակցությունից հրաժարվելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «Գանձասար-Կապան» թիմին հեռացնել VBET Հայաստանի Պրեմիեր լիգայի առաջնությունից, ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների խաղերին մասնակցելու իրավունքից զրկել՝ հաջորդ մրցաշրջանում միայն Առաջին խմբի առաջնությունում հանդես գալու հնարավորությամբ, «Գանձասար-Կապան» ՖԱ-ին տուգանել 500000 ՀՀ դրամի չափով:

9.2. «Գանձասար-Կապան» ՖԱ-ն՝ սեփական դիմումի համաձայն, VBET Հայաստանի Գավաթի խաղարկության ընթացքում հետագա մասնակցությունից հրաժարվելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «Գանձասար-Կապան» թիմին հեռացնել ԳԽ մրցաշարից, VBET Հայաստանի Գավաթի խաղարկությունից, հաջորդ մրցաշրջանում Գավաթի խաղարկության մասնակցության իրավունքից զրկել, «Գանձասար-Կապան» ՖԱ-ին տուգանել 500000 ՀՀ դրամի չափով:

9.3 «Գանձասար-Կապան» ՖԱ-ն՝ սեփական դիմումի համաձայն, VBET Հայաստանի Պրեմիեր լիգայի առաջնությունից և VBET Գավաթի խաղարկությունից հրաժարվելու համար, հիմք ընդունելով ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 17-րդ հոդվածի 17.06- կետը՝ չեղյալ համարել և զրոյացնել «Գանձասար-Կապան» թիմի և մրցակից թիմերի կողմից կայացած խաղերի ընթացքում ձեռք բերված միավորները:

10. 25/10/20թ. «Փյունիկ-աղջիկներ»-«Գանձասար-Կապան աղջիկներ» (ԿԲԽ016) խաղին՝ «Գանձասար-Կապան աղջիկներ» թիմի ֆուտբոլիստ Պայծառիկ Ալավերդյանի (N 34655) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

10. 25/10/20թ. «Փյունիկ-աղջիկներ»-«Գանձասար-Կապան աղջիկներ» (ԿԲԽ016) խաղին «Գանձասար-Կապան աղջիկներ» թիմի ֆուտբոլիստ Պայծառիկ Ալավերդյանի (N 34655) հեռացման (նույն խաղում 2 զգուշացում ստանալու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 39-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Պայծառիկ Ալավերդյանին որակագրկել 1 խաղով, «Գանձասար-Կապան» ՖԱ-ին տուգանել 3000 ՀՀ դրամի չափով:

ՆԱԽԱԳԱՀ

Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ՌՇՏՈՒՆԻ

Հիշեցում՝

ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի համաձայն Հոդված 12-ի համաձայն՝ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման կարգ.

Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումները Ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել Բողոքարկման Կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում: